Ընդհանուր տեսադաշտ

1. ***Ինչպիսի՞ն է Ձեր տեսակետը քաղաքի զարգացման հիմնական գերակայությունների մասին:***

Տարիների ընթացքում Թբիլիսիում գործում է քաղաքի կառավարման ոչարդյունավետ համակարգ. մայրաքաղաքի քաղաքապետը և 50 պատգամավոր սակրեբուլոում, որը հիմնականում ներկայացնում է մեկ քաղաքական կուսացություն և ձևավորում է կառավարությունը, հաշվի չի առնում բնակչության իրատեսական շահերը: Տարիների ընթացքում բյուջեն ծախսվում էր անթափանցիկ և օգտագործվում էր կառավարող ուժի կուսակցական շահերի համար:
Մենք ուզում ենք ստեղծել քաղաքի այսօրվա կառավարման մոդելի այլընտրական, միանգամայն այլ տեսակի կառավարում, երբ քաղաքի առջև գոյություն ունեցող հիմնախնդիրները կբացահայտվեն և կվճռվեն բնակչության կարծիքի հաշվառումով, բյուջեն չի ծառայի կառավարող ուժի կուսակցական շահերին. կբաշխվի և կծախսվի թափանցիկորեն, երբ բարձր պաշտոնի պետական աստիճանավորի աշխատանքային պայմանները և կյանքի չափորոշիչը չի լինի այնպես արմատականորեն տարբերվող շարքային թբիլիսեցու կյանքի չափորոշիչից, ինչպես դա այսօր մայրաքաղաքում է և ամբողջությամբ երկրում:
Մենք ուզում ենք, քաղաքի կառավարման գործում հասնել խորությամբ քաղաքական բարեփոխման, երբ իշխանության գործունեությունը կլինի թբիլիսեցիների մշտական վերահսկողության ներքո և իրատեսորեն հաշվետու կլինի նրանց առջև:
Բացի կառավարման համակարգից, մեր գերակայությունը կլինի փոքր և միջին բիզնեսին աջակցությունը, նոր մոտեցումը, քաղաքի տարածական սարքավորունը և պլանավորումը, ենթակառույցի զարգացումը և սերվիսների առավելագույնս մատչելիությունը:

Զարգացում և տնտեսություն

2. ***Խնդրում ենք, համառոտ նկարագրեք քաղաքի երկարաժամկետ տնտեսական զարգացման Ձեր տեսակետը/պլանը (եթե այդպիսինն ունեք):***

Մայրաքաղաքի առանձնահատուկ իրավիճակի պատճառով այսօր Թբիլիսիում կուտակված է երկրի ֆինանսական շրջանառության 80% և կոմերցիոն անշարժ ունեցվածքի մոտավորապես նույն բաժինը, սակայն չնայած դրան, քաղաքի արտահանման կարողությունը բարձր չէ և աննշան են տնտեսական գործունեության հեռանկարային տեսակների զարգացման մասշտաբները: Այսպիսի իրավիճակում քաղաքի ֆինանսական ռեսուրսները հաճախ ծախսվում են զրոյական տնտեսական էֆեկտ ունեցող միջոցառումների վրա:
Մենք պետք է անցնենք տնտեսական զարգացման նոր մոդելի և բարելավենք բիզնես-գործունեության համար մատչելի մթնոլորտ մայրաքաղաքում: Այդ նպատակով՝

- Աջակցություն կցուցաբերվի մանր և միջին բիզնեսի զարգացմանը, Կստեղծվի հատուկ հիմնադրամ, որը կտա ցածրտոկոսային վարկեր, այսպես կոչված «ստարտաֆի համար»:
- Կհասնենք ձեռնարկատիրության իրատեսական ազատության, մասնավոր սեփականության պահպանության, ազատ մրցակցության,
- Տենդերների և աճուրդների անցկացման թափանցիկ մեխանիզմի ստեղծում և այն պրակտիկայի վերացում, որի միջոցով էլ բիզնեսի համար հետաքրքիր օբյեկտներ, տարածքներ և տարածություններ ընկնում են քաղաքի իշխանությանը հետ մերձեցած անձանց ձեռքը,
- Անհատական ձեռներեցները կհարկագանձվեն հաստատուն հարկով և սկզբից ևեթ կխուսափեն հարկային մարմինների հետ հարաբերությունների բարդությունից,
- Այսօր գոյություն ունեցող մենաշնորհը վերացնելու համար կստեղծվի Թբիլիսիի հակամենաշնորհային ծառայություն, որը արմատախիլ կանի մենաշնորհներն այնպիսի սեգմենտներում, ինչպիսիք են վառելիքի վաճառքը, գովազդային շուկան, փոխադրումները, տրանսպորտը, ավտոկայանումը և այլն,
- Անօրեն բռնագրավված ունեցվածքը, որը քաղաքի սեփականությունում է, կվերադարձվի օրինական սեփականատերերին,
- Պետությունը կսահմանափակի անբարեխիղճ մրցակցությունը հարևան երկրներից, երբ միանգամայն անվերահսկելի երկիր է ներհոսում առողջության համար վտանգավոր արտադրանք, ինչը ինքնըստինքյան կնպաստի տեղական արտադրության զարգացմանը:

3. ***Ձեր կարծիքով, որո՞նք են այն գլխավոր հիմնախնդիրները, որոնք խոչընդոտում են Ձեր քաղաքի տնտեսական զարգացմանը:***

Կառավարման ոչճիշտ ոճը, բիզնեսի համար անմրցունակ միջավայրը, մենաշնորհները ամբողջ շարք ոլորտներում: Սակայն առաջին հերթին շահույթի և եկամտային հարկերի ամբողջությամբ ուղղումը դեպի կենտրոնական բյուջե, ինչը կորցնում է քաղաքների և մունիցիպալիտետների խրախուսումը՝ զարգացնելու արտադրությունը, ստանալու տեղական եկամուտներ բյուջեում և չլինելու կենտրոնական բյուջեի սպասման մեջ:

4. ***Ձեր կարծիքով, որո՞նք են Ձեր քաղաքի հիմնական հնարավորությունները /գերակայությունները, որոնք կձգտեք կիրառել քաղաքի տնտեսական և քաղաքային զարգացման հասնելու համար:***

Թբիլիսիի առավելություն ենք համարում այն, որ այն երկրի ֆինանսական կենտրոն է: Բացի դրանից, այն եղել է արդյունաբերական քաղաք և, համապատասխանաբար, գոյություն ունի արտադրության զարգացման պոտենցիալ՝ որակյալ աշխատող ձեռքի և զարգացած ենթակառույցի տեսքով: Բացի դրանից, Թբիլիսին և, ընդհանուր առմամբ, Վրաստանն ունի

հսկայական զբոսաշրջային կարողություն: Մենք պետք է կարողանանք մեր միանգամայն հազվագյուտ մշակույթի և ավանդույթների, վրացական խոհանոցի գրավչությունը կիրառել և զբոսաշրջությունը դնել երկրի տնտեսական զարգացման ծառայությունում:

5. ***Ինչպիսի՞ն Ձեր բյուջետային գերակայությունները: Խնդրում ենք համառոտ մեկնաբանեք Ձեր բյուջետային քաղաքականությունը:***

Բյուջետային քաղաքականությունում գլխավորն է փոքր կառավարություն և կրճատված բյուրոկրատական ծախսեր: Թբիլիսիի բյուջեն չի ծախսվում արդյունավետորեն և տարիների ընթացքում գոյություն ուներ այն կուսակցական նպատակների համար կիրառելու պրակտիկա: Թբիլիսեցիներին հատկացված փողի մեծ մասը չափից ավելի հաճախակի ծախսվում էր իշխանության բարձրագույն պաշտոնյա անձանց քմահաճույքների և կապրիզների բավարարմանը:
Թբիլիսիի քաղաքապետարանը չպետք է լինի կողոպտող: Մենք կստեղծենք «Ժողովրդական բյուջե» և դրա ամեն մի թեթրիի ծախսը միանգամայն թափանցիկ կլինի յուրաքանչյուր թբիլիսեցու համար:

6. ***Ի՞նչ միջոցառումներ կանցկացնեք քաղաքի բիզնես և կոմերցիոն ենթակառույցի բարելավմանը, ներդրումների գրավմանը նպաստելու համար:***

Ներդրումները գալիս են այնտեղ, որտեղ ազատ մրցակցություն է և իշխանությունը նվազ չափով է միջամտում տնտեսությանը: Միևնույն ժամանակ, կարևոր է, տեղական իշխանությունը (ինչպես սակրեբուլոն, այնպես էլ քաղաքապետարանը կամ վարչությունը) ապահովի, մի կողմից, մունիցիպալային բիզնես-ուղեցույցի պատրաստումը կարողունակ ներդրողների համար, որտեղ նրանց մանրամասն կլինի ներկայացված մունիցիպալիտետի (քաղաքի, շրջանի) կոնկրետ ներդրումային կարողությունները և առաջարկություններ և, մյուս կողմից, յուրաքանչյուր ներդրումային նախագծի քննարկում-իրականացումը պետք է անցկացվի թափանցիկության, հրապարակայնության և հասարակության ընդգրկվածության ապահովման պայմաններում:

Քաղաքային զարգացում/քաղաքի նախագծում /բնակարանաշինություն

7. ***Ի՞նչ միջոցառումներ կանցկացնեք քաղաքացիներին ավելի լավ բնակության պայմաններ ստեղծելու համար:***

Քաղաքը պետք է զարգանա: Պետք է ավարտվի «ամեն ինչ» Թբիլիսիի կենտրոնում շինարարության պրակտիկան և քաղաքի արվարձանները պետք է դառնան գրավիչ նրանց համար, ովքեր մտադիր են բարելավել բնակության պայմանները: Թբիլիսիի կենտրոնը պետք է բեռնաթափվի: Քաղաքի ծայրամասերում պետք է ստեղծվեն ժամանակակից, բարեհարմար

թաղամասեր արդարացված ենթակառույցով, մշակույթի և սպորտային-առողջարար օբյեկտներով, մանկական հրապարակներով, պուրակներով: Այս նպատակով՝

- Կպարզեցվի արվարձանային թաղամասերում չյուրացված տարածքների վրա դեվելոպերային ընկերությունների համար հողակալվածքների վաճառքի կարգը,
- Քաղաքի բյուջեից հատկացված միջոցներով կկատարվի այս թաղամասերի գազիֆիկացում, ջրամատակարարման, կոյուղու համակարգեր և ճանապարհների սարքավորում,
- Դեվելոպերները պարտավոր կլինեն շինարարությունը կատարել ամեն տեսակ պայմաններ ստեղծելու հաշվառումով (պարտեզ, դպրոց, կինոթատրոն, պուրակ, առողջարանային և հանգստյան գոտիներ):

8. ***Ի՞նչ միջոցառումներ եք պլանավորում անցկացնել քաղաքի փողոցների մաքրությունը բարելավելու համար:***

Քաղաքականութունում կա սկզբունք՝ «Պլյուսներին ավելացնենք պլյուսներ» - սա նշանակում է այն, որ եթե նախորդ իշխանությունը որևէ բան լավ է կատարել, այն բարելավի: Քաղաքի մաքրության տեսակետից շատ բան կարգավորվել է, ներկրվել է տեխնիկա, մաքրումը և մնացորդների դուրսբերումը կատարվում է կանոնավոր կերպով, համենայն դեպս՝ քաղաքի կենտրոնական թաղամասերում: Մենք էլ ավելի կբարելավենք բարեկարգման ծառայության գործունեությունը, կբերենք այնքան տեխնիկա, որքան հարկավոր է ողջ քաղաքին, արվարձանները ուշադրությունից դուրս չեն մնա:
Քաղաքի մաքրությունը պայմանավորում է նրա էկոլոգիական իրավիճակը: Այդ պատճառով՝

- Պինդ կենցաղային մնացորդների ոչնչացումը կկատարվի ոչ թե այրմամբ և հողի մեջ թաղելով, այլ աղբի վերամշակման ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ,
- Կկատարվի պինդ կենցաղային մնացորդների դուրսբերման ապահովում մայրաքաղաքի կազմի մեջ մտնող գյուղերից,
- Միացված գյուղերը կոյուղու համակարգով ապահովելու համար մայրաքաղաքի բյուջեից կտրվեն համապատասխան հատկացումներ,
- Կբացահայտվի և կվերացվեն անօրինական աղբանոցները,
- Քաղաքակիրթ երկրների քաղաքներում արմատավորված պրակտիկայի նման փուլ առ փուլ կանցնենք մնացորդների, այսպես կոչված, առանձնացված հավաքման համակարգի արմատավորմանը:

Ենթակառույց և տրանսպորտ

9. ***Ի՞նչ միջոցառումներ եք մտադիր անցկացնել հասարակական տրանսպորտի համակարգի բարելավման համար:***

Այսօրվա դրությամբ չհիմնավորված և մայրաքաղաքի բնակիչների համար ոչհարմարավետ են ճանապարհային մայրուղիների և տրանսպորտային համակարգի զարգացման գոյություն ունեցող միտումները:
Մենք կհասնենք այն բանին, որ՝

- Մարաքաղաքի զարգացումը կողմնորոշված լինի ինտեգրված տրանսպորտային համակարգերի ձևավորման վրա,
- Թբիլիսիի բնակիչների տրանսպորտային ծառայության արդյունավետությունը ավելանա համանման տրանսպորտային զարկերակների և հանգույցների ստեղծմամբ,
- Կառուցվեն Քուռ գետի ձախ և աջ առափնյակները կապող կամուրջներ, առաջի հերթին, Սաբուրթալոյի և Դիդուբեի և հաջորդ փուլում՝ այլ թաղամասերի միջև հաղորդակցության և տրանսպորտային հանգույցների բեռնաթափման նպատակով,
- Գերակայություն շնորհվի հասարակական տրանսպորտի զարգացմանը և մայրաքաղաքի բնակիչներին տրվի քաղաքային տրանսպորտով էժան տեղաշարժվելու հնարավորություն,
- Թբիլիսին ունենա ժամանակակից, էկոլոգիապես մաքուր քաղաքային տրամվայ, արագ ընթանա մետրոյի սկսված կայարանների շինարարությունը և պլանավորվեն նոր կայարաններ,
- Թբիլիսին այլևս չպետք է լինի այնպիսի քաղաք, որտեղ քաղաքային տրանսպորտը միայն օրվա ժամերին երթևեկի, թբիլիսեցիները ունենան գիշերվա ժամերին էժան տրանսպորտով տեղաշարժվելու հնարավորություն,
- Շեշտակի կավելանա ուղևորների տեղեկացվածության էլեկտրոնային համակարգով սարքավորված և հարմարավետ կանգառների թվաքանակը:

10. Ի՞նչ միջոցառումներ եք մտադիր անցկացնել քաղաքում ճանապարհային երթևեկության անվտանգության բարելավման համար:

- Կզարգանա ավտոկայանման քաղաքային ցանցը, կարգելվի նոր բնակելի թե հասարակական նշանակության բազմահարկ շինությունների շինարարությունը առանց ստորգետնյա ավոկայանատեղով,
- Կկարգավորվեն լուսանշանները,
- Կսկսվի կոմունալային ենթակառույցի արդիականացումը ժամանակակից տեխնոլոգիայների կիրառմամբ (հորերի, կոլեկտորների կափարիչները կդառնան անվտանգ տեղափոխության համար),
- Կկարգավորվի ճանապարհային ծածկույթը:

11. Ի՞նչ միջոցառումներ կանցկացնեք սահմանափակ կարողություններով անձանց քաղաքում տեղաշարժի հնարավորությունների բարելավման համար:

Թբիլիսին կլինի առավելագույնս հարմար քաղաք սահմանափակ կարողություններով անձանց տեղաշարժի համար: Օրենսդրությունը արդեն նախատեսում է հասարակական նշանակության

շինությունների անպայման հարմարեցում ՍԿ (Սահմանափակ անձանց համար, սակայն գոյություն չունեն օրենսդրությունը խախտողի նկատմամբ պատժի կատարման մեխանիզմներ: Մենք կստեղծենք այդպիսի մեխանիզմ: Բացի դրանից, փուլ առ փուլ կփոխվի հասարակական տրանսպորտը և տենդերի պայմաններում կդրվի պատշաճ տեխնիկական սարքավորումներով սարքավորված տրանսպորտային միջոցների ներկրում: Ինչ վերաբերում է մայթերի վրա հատուկ թեքությունների պատրաստումը, դա կլինի նորմը:

Մշակույթ և կրթություն

12. Ի՞նչ ծրագրեր կիրականացնեք մշակութային կյանքի բարելավման համար::

Մայրաքաղաքի մշակութային կյանքը մահացած է: Պաշտպանված թբիլիսեցիների իրավունքը, հասանելի լինեն մշակութային միջոցառումները, հանգստանան, հետաքրքրության համապատասխան հիանան արվեստով:

Մենք կապահովենք.

- Քաղաքի բոլոր շրջաններում գրադարանների, մանկական ստեղծագործությունների կենտրոնների, երաժշտական և նկարչական մարզական դպրոցների և ակումբերի գոյությունը, որտեղ սպասարկումը կլինի մատչելի գնով, իսկ առանձին դեպքերում՝ անվճար:
- Թբիլիսիում տեղի չի ունենա նոր թաղամասերի շինարարություն, որտեղ հաշվի առնված չեն լինի կինոթատրոն, մարզական դահլիճներ և մարզահրապարակներ, իսկ արդեն գոյություն ունեցող թաղամասերում կարողությունների շրջանակներում կկառուցվեն այս տիպի հիմնարկություններ: Նրանց շինարարության ծախսերը կստանձնի քաղաքապետարանը:

13. Ձեր իրավասության սահմաններում, ինչպե՞ս կգործեք կրթության մատչելիության և որակի բարելավման նպատակով:

Կրթության ոլորտում անցկացվեց օպտիմիզացիայի գործընթաց, որի արդյունքում տեղի ունեցավ դպրոցների չհիմնավորված համադրում և խոշորացում: Թբիլիսիի մի շարք թաղամասեր մնացին առանց մանկապարտեզների և հանրակրթական դպրոցների: Սա առաջացրեց միանգամայն անառողջ գործընթաց, երբ մանկապարտեզ և դպրոցի առաջին դասարան երեխային «դասավորելը» Թբիլիսիում բնակվող ընտանիքների համար դարձավ լուրջ հիմնախնդիր: Մանկապարտեզներում սաների «խտությունը» խանգարում է նրանց համար նորմալ ուսումական և դաստիարակչական պայմանների ստեղծմանը:

Մենք կհասնենք՝

- Բոլոր թաղամասերը ունենան լավ սարքավորված մանկապարտեզ,
- Մանկապարտեզներում կարգելվի վճարովի ծառայությունը և ամեն տեսակ խմբակ կլինի ֆինանսավորված քաղաքի բյուջեի կողմից,

- Կդադարեցվի հանրակրթական դպրոցների սեփականաշնորհման պրակտիկան և բոլոր թաղամասերում գոյություն կունենա թաղամասի պահանջներին համապատասխան դպրոց,
- Հնարավորությունների շրջանակներում դպրոցները կունենան խաղահրապարակներ և մարզական դահլիճներ, իսկ նոր դպրոցները կկառուցվեն միայն պատշաճ չափանիշների պահպանությամբ,
- Նոր մասշտաբ ձեռք կբերի քաղաքային առարկայական և մարզական օլիմպիադաների անցկացումը հանրակրթական դպրոցների աշակերտների շրջանում,
- Թբիլիսին կդառնա ուսանողական քաղաք, հիմք կդրվի ուսանողական փառատոների, մարզական մրցումների, գիտական կոնֆերանսների անցկացմանը:

Անվտանգություն և հանցագործություն

14. Ձեր իրավասության շրջանակներում, ի՞նչ միջոցառումներ կանցկացնեք հանցագործության դեմ պայքարի, հանցանքի կանխարգելման համար:

Մայրաքաղաքում և այլ քաղաքներում և մունիցիպալիտետներում անվտանգության և հանցագործության հետ պայքարի արդյունավետությունը կմեծանա, եթե ոստիկանությունը դառնա մունիցիպալային: Սա, պարզ է, չի հաջողվի առանց օրենսդրական մակարդակով համապատասխան փոփոխությունների:

Առողջապահություն և սոցիալական քաղաքականություն

15. Ինչպիսի՞ն կլինի քաղաքում Ձեր սոցիալական քաղաքականությունը և ի՞նչ սոցիալական ծրագրերի իրականացման համար կհոգաք:

Նոր իշխանության գալուց հետո էլ ավելի մեծացավ բևեռացումը և չափից ավելի ակնառու դարձավ անհամաչափությունը բարձր պաշտոնյա պետական աստիճանավորների աշխատավարձի, նրանց բարեհարմարության համար ծախսված գումարների և հասարակ բնակչության եկամուտների միջև: Ապրուստի զանբյուղը և ապրուստի նվազագույնը, գործնականում չեն ապահովում մարդու ֆիզիկական գոյությունը: Մարդիկ սոցիալապես ավելի շատ պետք է լինեն պաշտպանված:

Մենք կհասնենք նրան, որ՝

- Փոխվի մոտեցումը գոյության նվազագույնի սահմանման կարգի նկատմամբ,
- Աշխատավարձը չի լինի գոյության նվազագույնից պակաս,
- փոխվի մոտեցումը նվազագույն կենսաթոշակի սահմանման կարգի նկատմամբ և այն նշանակվի ստաժի և վաստակի համաձայն,
- Կենսաթոշակառուները ստանան 20 լարիանոց հավելավճար անհրաժեշտ դեղորայք ձեռքբերելու համար,

- Միայնակ կենսաթոշակառուները ազատվեն հարկերից սեփական բնակարանը վարձով տալու կամ արենդայով տալու դեպքում,
- Ստեղծվի Թբիլիսիի քաղաքապետարանի մունիցիպալային բնակարանային հիմնադրամ, որտեղից ժամանակավոր ապրելու տեղ հատկացվի տարբեր պատճառներով անօթևան մնացած ընտանիքներին
- Թբիլիսիի համալսարանների և ուսումնական ինստիտուտների ուսանողները օգտվեն քաղաքային տրանսպորտից զեղչ ով,
- Քաղաքում ստեղծվի «անպատնեշ միջավայր» ՍԿ անձանց տեղաշարժի համար,
- Գոյություն չեն ունենան տգեղ բարակներ և փլուզման ծայրին հասած տարհանվածների բակելի շենքեր: Տարհանվածներին հատկացվի և օրինականացվի տարածքը, որտեղ բնակվում են,
- Ավելանա անչափահասների համար ծանր վիրահատությունների համաֆինանսավորումը, այդ թվում՝ արտասահմանում,
- Ինքնակառավարումներին փոխանցվեն հիվանդանոցների և դպրոցների կառավարումը, կառուցվեն նոր մսուր-մանկապարտեզներ,
- Շնորհալի ուսանողներին դրամաշնորհը ֆինանսավորվի լրիվությամբ ((100%);
- Թբիլիսիի ինքնակառավարումը ֆինանսավորի բազմազավակ ընտանիքներին:

16. Ի՞նչ միջոցառումներ կիրականացնեք Ձեր քաղաքում առողջապահության ընդհանուր ցուցիչների բարելավման համար:

Համընդհամուր առողջապահության ծրագրի ընդունումը, չնայած նրա բազում թերություններին, հանեց հիմնախնդիրների մի մասը: Թերևս անհետաձգելի վիրահատությունները չեն ֆինանսավորվում լրիվությամբ և ընտանիքները դժվարանում են համաֆինանսավորում իրականացնել: Մենք կհատկացնենք միջոցներ այն բանի համար, որ անչափահասների ծանր վիրահատությունները ֆինանսավորվի քաղաքապետարանի բյուջեից: Այդ թվում արտասահմանում անցկացվելիք վիրահատությունները: Նաև պլանավորում ենք կենսաթոշակառուներին անհրաժեշտ դեղորայք ձեռք բերելու համար մտցնել հատուկ վաուչերներ:

17. Ի՞նչ միջոցառումներ եք պլանավորում անցկացնել քաղաքում անօթևանների սոցիալական պայմանները բարելավելու համար:

Այս տարվա բյուջեում երկու ընդդիմադիր պատգամավորի՝ իմ և Մամուկա Կացիտաձեի նախաձեռնությամբ, արդեն դրվել է 3 մլն. լարի «Սոցիալական տան» կառուցման համար: Սա առաջին նախադեպն է: Մենք կապահովենք, որ շարունակվի բյուջեից գումարների հատկացումը անօթևան մնացածների և անապաստան ծերերի համար, այսպես կոչված «Սոցիալական տներ» կառուցելու նպատակով:

Էկոլոգիա, ռեկրեացիա և սպորտ

18. Ի՞նչ միջոցառումներ եք մտադիր անցկացնել քաղաքի էկոլոգիական իրավիճակի բարելավման համար:

Թբիլիսին, որը աչքի էր ընկնում իր կանաչապատումով և մաքրությամբ, այսօր էկոլոգիական ցուցիչների համաձայն, անբարենպաստ քաղաքներից մեկն է: Դա վերաբերում է ինչպես մթնոլորտային աղտոտմանը, այնպես էլ ջրի և ջրային համակարգի անվտանգությանը, հիվանդությունների տարածման սպառնալիքին և այլն:
Կարևոր է Թբիլիսին դառնա հարմարավետ և անվտանգ քաղաք: Այս նպատակով՝

- Կստեղծվի քաղաքային կադաստր և կիրականացվի մոնիթորինգ ֆիզիկական աղտոտողների (մթնոլորտային արտամղումների, ռադիոակտիվ, էլեկտրոմագնիսական, տատանողական, ինֆրա և ուլտրահնչյունների, աղմուկի) աղբյուրների վրա: Մոնիտորինգի տվյալների հիման վրա կընդունվեն կոնկրետ միջոցներ (տուգանքներ, դատական հայց գործունեությունը դադարեցնելու մասին և այլն),
- Կհայտարարվի վերահսկողություն ջրի որակի վրա,
- Վերակուլտիվացված կլինեն քաղաքի բնական ջրամբարները,
- Պինդ կենցաղային մնացորդների վերացումը կկատարվի ոչ թե այրելով և հողի մեջ թաղելով, այլ աղբի վերամշակման ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ,
- Կկատարվի կենցաղային մնացորդների դուրսբերման ապահովում մայրաքաղաքի կազմի մեջ մտնող գյուղերից,
- Միացված գյուղերը կոյուղիների համակարգով ապահովելու համար մայրաքաղաքի բյուջեից կլինեն համապատասխան հատկացումներ,
- Կբացահայտվեն և կոչնչացվեն ոչօրինական աղբանոցները,
- Քաղաքակիրթ երկրների քաղաքներում արմատավորված պրակտիկայի նման, փուլ առ փուլ կանցնենք մնացորդների, այսպես կոչված, առանձնացված հավաքման համակարգի արմատավորմանը,
- Կարմատավորվեն էներգամատակարարման և ջերմամատակարարման էկոլոգիապես մաքուր և արդյունավետ տեխնոլոգիաներ,
- Կավելանան բյուջեում հատկացված գումարները արևի էներգիայի կիրառմամբ բնակչությանը տաք ջրով և ջեռուցմամբ ապահովելու համար և 2018 թվականին Թբիլիսին կդառնա էներգոարդյունավետ քաղաք,
- Անհատական ջեռուցման և տաք ջրի համակարգերի փոխարեն նոր կառուցված շենքերում պարտադիր կդառնա ժամանակակից, էկոլոգիապես մաքուր և տնտեող կաթսաների մոնտաժը: Սպառողը տաք ջրի և ջերմային էներգիայի հաշվարկի համար ստեղծի անհատական համակարգ, ինչը կբացառի հարևանների միջև սպասվող անհասկանալիությունները:

19. Ի՞նչ միջոցառումներ կանցկացնեք քաղաքում ռեկրեացիոն գոտիների, զբոսայգիների ընդարձակման և զարգացման համար:

Տարածքային տարածման և քաղաքաշինության քաղաքականությունը վերջին տարիներին դարձավ մայրաքաղաքի ամենասուր հիմնախնդիրը: Այս ուղղությամբ քաղաքում իրականացված նախագծերը կոպիտ կերպով խախտեցին թբիլիսեցիների իրավունքը՝ ապրելու բարեկարգ միջավայրում: Շինարարական կոմպլեքսը «հարձակում» իրականացրեց կանաչ «գոտիների» վրա: Մենք կհասնենք նրան, որ՝

- Հիմնավորապես վերանայվի Թբիլիսիի զարգացման գլ խավոր պլանը և պաշտպանված լինեն տարածական դասավորվածության և քաղաքաշինության ժամանակակից չափորոշիչները,
- Փոփոխվեն հողից օգտվելու և շինարարության «դրակոնային» չափորոշիչները, որոնք գործնականում «նեղ տարածքում» փակեցին թբիլիսեցիների մեծ մասի բնակության արեալը և կազմակերպեցին մի շարք թաղամասերի «ցեղասպանություն»,
- Թբիլիսիի պատմական և կանաչ գոտիներում արգելվի շինարարությունը,
- Թբիլիսին դառնա «Երեխաների բարեկամ« քաղաք, որտեղ գործնականում բոլոր միկրոթաղամասերում կլինեն մանկական հրապարակներ, կանաչապատված և նրանց զվարճության համար անվտանգ միջավայր, Թբիլիսիում չեն լինի փլուզման եզրին հասած տներ, դրանց վերականգնման ծախսերը նախատեսված լինեն քաղաքի բյուջեում, բացի դրանից, տեղի ունենա շինարարական ընկերությունների խրախուսում այսպիսի թաղամասերում ամրակալման աշխատանքներ և նոր շինարարություններ սկսելու նպատակով:
- Թբիլիսին վերստին ունենա «կանաչ թոքեր», ավելանան կանաչապատման գոտիները,
- Դադարեցվի բարբարոսական վերաբերմունքը ծառերի նկատմամբ, երբ կանաչապատման ծառայությունը գործնականում չի վերահսկում շինարարների կողմից պարտականությունների կատարումը՝ հատելու ենթակա ծառերի վերատնկման, կամ դրանց փոխարեն այլ տեղում նոր ծառեր տնկելու ուղղությամբ,
- Փակ տարածքներում արգելվի ցանկացած տեսակ շենքերի կանգնեցումը, որոնք պահանջում են կանաչ տնկիների հատում, ոչնչացված լինեն արդեն գոյություն ունեցող այնպիսի օբյեկտներ, որոնք անօրեն են կանգնեցված կամ կառուցված և խախտում են բնապահպանության ռեժիմը,
- Սկսվի քաղաքի շուրջը գոյություն ունեցող անտառ-զբոսայգիների վերականգնումը և նոր անտառ-զբոսայգիների կառուցումը:

20. Ի՞նչ մտադրություններ ունեք սպորտի և առողջ կենսակերպի զարգացման և մարզական-ռեկրեացիոն ենթակառույցի բարելավման համար:

Քաղաքում վերացվեցին շատ այն ավանդական վայրերը, որոնք թբիլիսեցիների համար սպորտի և առողջ կենսակերպի հետ էին ասոցիացվում: Անհրաժեշտ է նոր այդպիսի վայրերի ստեղծում: Բացի դրանից, քաղաքապետարանը պետք է վարի առողջ կենսակերպի քարոզչություն անձնական օրինակով, սոցիալական գովազդների միջոցով: Ինչ վերաբերում է

հանգստյան գոտիներին, մենք այդ նպատակով նախատեսել ենք հանգստյան գոտիների, զբոսայգիների և պաշտպանված տարածքների ընդարձակում:

Թբիլիսի

21. Ի՞նչ միջոցառումներ եք պլանավորում քաղաքում անցկացնել հետիոտնի տեղաշարժի անվտանգությունը և հարմարավետությունը բարելավելու համար:

Թբիլիսիի զարգացման գլխավոր պլանի գերակայությունները կլինեն. Պաշտպանված և կանաչապատված տարածքների, բաց հասարակական տարածությունների զարգացում, հին Թբիլիսիի արտաքին տեսքի պահպանում, ոտքով զբոսնողների և հասարակական տրանսպորտի գերակայություն, ենթակառույցի դրական էֆեկտի ապահովում այն տարածքների համար, որտեղ դրանք տեղադրված են:

22. Ի՞նչ միջոցառումներ եք պլանավորում անցկացնել քաղաքում ավտոմոբիլային երթևեկության կարգավորման և ճանապարհային խցանների կրճատման նպատակով:

Ինչպես նշեցինք, մայրաքաղաքի զարգացումը կողմնորոշված կլինի ինտեգրված տրանսպորտային համակարգերի ձևավորման վրա:Դա նշանակում է այն, որ պետք է մեծանա Թբիլիսիի բնակիչների տրանսպորտով սպասարկման արդյունավետությունը:

- Դա կատարել մենք պլանավորում ենք համանման տրանսպորտային զարկերակների և հանգույցների ստեղծմամբ,
- Պլանավորված են Քուռ գետի ձախ և աջ առափնյակները կապող կամուրջներ, առաջին հերթին, Սաբուրթալոյի և Դիդուբեի և հաջորդ փուլում՝ այլ թաղամասերի միջև,
- Հաղորդակցության և տրանսպորտային հանույցների բեռնաթափման նպատակով առավելություն կշնորհվի հասարակական տրանսպորտի զարգացմանը,
- Թբիլիսին կունենա ժամանակակից, էկոլոգիապես մաքուր քաղաքային տրամվայ, կարագացվի մետրոյի սկսված կայարանների շինարարությունը և կպլանավորվեն նոր կայարաններ,
- Խցանները հաճախ առաջացնում են կայանման համակարգի անկարգություն: Այդպիսով, կզարգանա կայանման քաղաքային ցանցը, կարգելվի նոր բնակելի կամ հասարակական նշանակության բազմահարկ շինությունների շինարարությունը առանց ստորգետնյա կայանատեղիների:

23. Ի՞նչ միջոցառումներ եք մտադիր անցկացնել փողոցային կենդանիների հիմնախնդրի կարգավորման համար:

- Կընդունվեն խիստ միջոցներ թափառող շների նկատմամբ սաստիկ հարձակումները վերացնելու համար,

- Կբացվեն ապաստաններ թափառող շների համար և կստեղծվի նրանց հաշվարկի և նույնականացման համակարգ, կազմակերպված կլինի սոցիալական գովազդ ապաստանում տեղավորված կենդանիների նոր ընկերներ գտնելու նպատակով,
- Կմշակվեն ընտանի կենդանիներ պահելու ժամանակակից և քաղաքակիրթ կանոններ, համապատասխան ակտերով կավելանա տիրոջ պատասխանատվությունը այս կանոնները խախտելու համար:

24. Ի՞նչ միջոցառումներ եք պլանավորում անցկացնել անավարտ շինարարությունների, վթարային շինությունների հիմնախնդիրների կարգավորման համար:

Անավարտ շինարարությունների ավարտման համար կսահմանվի ժամկետ: Ժամկետը լրանալուց հետո տիրոջը կտրվի հնարավորություն վաճառելու իր ակտիվը կամ այս ակտիվը կվաճառվի հրապարակորեն և գումարը կտրվի տիրոջը: Օբյեկտը կփոխանցվի ներդնողին բաց և թափանցիկ պայմաններում:

25. Ի՞նչ միջոցառումներ կանցկացնեք քաղաքի պատմական արտաքին տեսքը պահպանելու համար:

Վերջին մի քանի տարում ընթանում է «հարձակում» Թբիլիսիի պատմականորեն հին մասի վրա և խախտվում է նրա արտաքին տեսքը: Անհասկանալիորեն ինչպես նախորդ, այնպես էլ ներկայիս իշխանության բարձր պաշտոնյաների ճարտարապետական երևակայությունների իրականացման տեղ դարձան հատկապես Թբիլիսիի հին թաղամասերը և ընթանում է մրցույթ, ով ավելի «կտաքացնի» իր ձեռքը մեր մայրաքաղաքի հնագույն մասում, որը ներկայացնում է նրա այցետոմսը և գլխավոր մշակութային արժեքը:
Մենք խոստանում ենք թբիլիսեցիներին, որ վերջնականապես վերջ կտրվի և կտրուկ կերպով կարգելվի կոպիտ միջամտությունը մայրաքաղաքի հին մասին:
Այդ նպատակով՝

- Օրենսդրության համաձայն, կսահմանափակվի քաղաքաշինական-տնտեսական և այլ գործունեություն քաղաքի պատմական մասում,
- Պատմական մասի պատմական բնակավայրի, նրա քաղաքային հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության նպատակով կմշակվի պատմական բնակավայրի գլխավոր պլան,
- Խստորեն կպաշտպանվի օրենսդրությունը և չի տրվի թույլտվություն քաղաքային հուշարձանների միջավայրի համար անընդունելի շինարարությունների, այն շինարարությունների և առանձին շինությունների կառուցման համար, որոնք խախտում են բնակավայրի պատմականորեն ձևավորված կառուցվածքը և տարածական դասավորվածությունը, սահմանափակում են քաղաքային հուշարձանների և պատմական միջավայրի ըմբռնման պայմանները, վտանգ են ստեղծում դրանց պահպանությանը,

- Որոշ ուղղումներ մտցնելուց հետո կշարունակվի «Հին Թբիլիսիի նոր կյանքը« ծրագիրը:

26. Ինչպիսի՞ն է Ձեր դիրքորոշումը Թբիլիսիի շրջանցիկ երկաթգծի շինարարության հարցին:

Թբիլիսիում շրջանցիկ երկաթուղի պետք է կառուցվի: Դա կարևոր է տարածական դասավորվածության և էկոլոգիական տեսակետից: Բացի դրանից, դրա հաշվին հնարավոր է կարգավորվի տրանսպորտի և կայանման համակարգը երկրում:

27. Ինչպիսի՞ն է Ձեր դիրքորոշումը Վակեի զբոսայգու մոտակայքում պլանավորված հյուրանոցի շինարարության հարցին:

Շինարարությունը պետք է դադարեցվի, պետք է կատարվի տարածքի վերակուլտիվացիա և բիզնեսմեններին տրվի փոխհատուցում: